

<b>Համարը N 418</b> <b>Տիպը</b> Որոշում <b>Սկզբնաղբյուրը</b> ԼՂՀՊՏ-ում չի հրապարակվել <b>Ընդունող մարմինը</b> ԼՂՀ կառավարություն <b>Ստորագրող մարմինը</b> ԼՂՀ Վարչապետ <b>Վավերացնող մարմինը</b> <b>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</b> 16.11.2004	<b>Տեսակը</b> Մայր <b>Կարգավիճակը</b> Գործում է <b>Ընդունման վայրը</b> Ստեփանակերտ <b>Ընդունման ամսաթիվը</b> 16.11.2004 <b>Ստորագրման ամսաթիվը</b> 16.11.2004 <b>Վավերացման ամսաթիվը</b> <b>Ուժը կորցնելու ամսաթիվը</b>
--	---

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԶՐԱՅԻՆ ՕՔՅԵԿՏ-ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ, ԿԱԶՄԻ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱԳՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

"16" նոյեմբերի 2004թ.

N 418

ք.Ստեփանակերտ

### ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ, ԿԱԶՄԻ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱԳՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաքաղի Հանրապետության **ջրային** օրենսգրքի 105-րդ հոդվածին և 121-րդ հոդվածի 5-րդ մասի 23-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

Սահմանել **ջրային օբյեկտ-բնության** հուշարձանների կարգավիճակի, կազմի և օգտագործման ու պահպանության առանձնահատկությունները՝ համաձայն հավելվածի:

ԼՂՀ ԿԱՐՁԱՊԵՏ

Ա.ՂԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված  
ԼՂՀ կառավարության  
2004թ. նոյեմբերի 16-ի  
թիվ 418 որոշման

### ԶՐԱՅԻՆ ՕՔՅԵԿՏ-ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ, ԿԱԶՄԻ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱԳՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույնով սահմանվում են լճերին, գետերին, լճակներին, հեյզերներին, ջրաճահճային տարածքներին, թերմալ և հանքային ջրաղբյուրներին, ջրվեժներին, սառցադաշտերին /այսուհետ՝ **ջրային օբյեկտ-բնության** հուշարձանի կարգավիճակ տալու, կազմի, պահպանության և օգտագործման առանձնահատկությունները:

2. **Ջրային օբյեկտ-բնության** հուշարձաններին տրվում է միջազգային նշանակության կարգավիճակ՝ համաձայն Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կողմից կնքված միջազգային համաձայնագրերի:

Միջազգային նշանակության կարգավիճակ ունեցող **ջրային օբյեկտ-բնության** հուշարձանների օգտագործման և պահպանության առանձնահատկությունները սահմանվում են համապատասխան միջազգային համաձայնագրերով:

3. **Ջրային օբյեկտ-բնության** հուշարձաններին տրվում է հանրապետական կամ տեղական նշանակության կարգավիճակ՝ համաձայն «**բնության**» հատուկ պահպանվող տարածքների մասին» Լեռնային Ղարաքաղի Հանրապետության օրենքի:

4. Հանրապետական նշանակության կարգավիճակ ստացող **ջրային օբյեկտ-բնության** հուշարձանը գտնվում է Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կառավարության պետական լիազոր մարմնի պահպանության և ենթակայության ներքո:

5. Տեղական նշանակության կարգավիճակ ստացող **ջրային օբյեկտ-բնության** հուշարձանը գտնվում է համապատասխան տարածքային պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների պահպանության և ենթակայության ներքո:

6. Այն **ջրային օբյեկտ-բնության** հուշարձանը, որն ստանում է հանրապետական կամ տեղական նշանակության կարգավիճակ և գտնվում է կազմակերպությունների կամ ֆիզիկական անձի տնօրինությանը՝ տվյալ **բնության** հուշարձանի պահպանման վկայականում նշված պահպանման ռեժիմի պայմանների պարտադիր կատարման պահանջով:

7. Հանրապետական և տեղական նշանակության **ջրային օբյեկտ-բնության** հուշարձանների ցանկը,

կարգավիճակը և կազմը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

8. **Ջրային օբյեկտներն** ստանում են **բնության** հուշարձանների կարգավիճակ, եթե՝

ա) օժտված են «**բնության**» հատուկ պահպանվող տարածքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված առանձնահատկություններով.

բ) դրանք հանդիսանում են բնակության միջավայր Լեռնային Ղարաբաղի կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և անհետացող կենդանական ու բուսական աշխարհի **օբյեկտ**ների համար.

գ) **ջրային օբյեկտ**ների հարակից տարածքում առկա են պատմամշակութային և **բնության** եզակի համալիրներ.

դ) **ջրային օբյեկտ**ն ունի յուրահատուկ կամ եզակի աշխարհագրական դիրք և երկրաբանական ծագում:

9. **Ջրային օբյեկտ-բնության** հուշարձանն ստանում է պահպանման վկայական, որը ներառում է՝

ա) անվանումը և դրա նշանակությունը /միջազգային, հանրապետական, տեղական նշանակության/,

բ) գտնվելու վայրը և ծովի մակերևույթի նկատմամբ բարձրության նիշը,

գ) տարածքի սահմանների նկարագրությունը, որը սահմանված կարգով հաստատում է բնագավառի պետական լիազորված մարմնի և համապատասխան համայնքի ղեկավարի /համայնքի վարչական սահմաններում/ կամ շրջվարչակազմի ղեկավարի /համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում/ կողմից,

դ) զբաղեցված մակերեսը,

ե) անհրաժեշտության դեպքում՝ առավելագույն և նվազագույն խորությունները,

զ) պահպանման ռեժիմը,

է) պահպանական գոտու չափերն ու ռեժիմը,

ը) պահպանությունն ապահովող կազմակերպության անվանումն ու գտնվելու վայրը:

10. **Ջրային օբյեկտ-բնության** հուշարձանի տարածքում ցանկացած գործունեություն չպետք է հակասի դրա պահպանման ռեժիմին:

11. **Ջրային** համակարգերում **ջրային օբյեկտ**ները չեն կարող ունենալ **բնության** հուշարձանի կարգավիճակ:

12. **Ջրային օբյեկտ-բնության** հուշարձանի ցանկացած տեսակի օգտագործումը չպետք է հակասի այդ **բնության** հուշարձանի պահպանման ռեժիմին:

**ԼՂՀ կառավարության աշխատակա  
զմի  
ղեկավար-նախարար**

**Ս.Գրիգորյան**